ձիերով արշաւել գիւղացոց ուսերի և պարանոցների վերայից։

Հայ բնակիչներ գտնվում են, ինչպէս յիշեցի, Մագուայ խանութեան մէջ, 100 տուն Մագուայ մէջ, 80 տուն Քեչմիչ-թափայ գիւղում, 50 տուն Թադէոս առաքելոյ վանքի գիւղումը— ընդամենը 230 տուն։

Թաթար բնակիչների համեմատութեամբ հայերին կարելի է բարեբաստիկ համարել։ Իսկ էլ հայերը առանձին շնորհքներ չեն վայելում, ապրում են թաթարների նման միաձև կառավարութեան տակ, համանման պայմաններով. նոքա նոյնպէս խաների արտերը մշակում, անասունները պահում, ձրիապէս աշխատում են, խանին տալիս են, քրդին տալիս են, բայց նրանց տները դարձեալ լիքն է տարեկան պաշարով. նաև ծախու են հանում իւղ, պանիր և արմտիք։ Ես մինչև անգամ Քեչմիչ-թափի երեսփոխի տանը չայ խմեցի և տաք կերակուրներ կերայ։ Եթէ իրանց գիւղացոց հարցնես, ինչ է այդ իրանց և թաթարների մէջ եղած զգալի զանազանութեան պատճառը. նրանք կ՝պատասխանեն որ դա «Հայ քրիստոնէի տան խէր-բարսաթն է, մեռոնի աւազանի և մկրտութեան սուրբ շնորքն է, որից զրկված են թաթարները»։ Ճիշդն ասելով այդ զանազանութեան պատճառը հայոց աշխատասիրութիւնն է, որ նրանց առաւելու-